Շվեդիա
Sverige

Հայաստանի
ՔՀԿ-ների
Հակակոռուպցիոն
Կոալիցիա

«ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆՈՒՆ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ» ԾՐԱԳԻՐ

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԴՊՐՈՑ

- 2-ամսյա առցանց հիմնական ուսուցում
- 2-ամսյա խորացված ուսուցում, որը ներառում է արտագնա դասընթացներ, կրթաթոշակներ՝ խմբային աշխատանքների համար, ուսուցանողների ուսուցումներ

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԱԿՈՒՄԲՆԵՐ

2-ուսուցում, որը ներառում է

- Առցանց դասընթացներ, ներկայացումներ, ֆլեշմոբեր
- Ֆիլմի դիտումներ, քննարկումներ, ներկայացումներ
- Շարադրությունների մրցույթ

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԱՐՇԱՎ

Դեկտեմբերի 9՝ կոռուպցիայի դեմ պայքարի միջազգային օր

- Ելույթներ, պետական մարմինների ներկայացուցիչներ, հասարակական կազմակերպություններ
- Դպրոցի եւ ակումբի աշխատանքների ամփոփում
- Վկայականների հանձնում
- Նվերների՝ գրքերի հանձնում

«Երիտասարդությունը հանուն հակակոռուպցիայի» ծրագիր

«Երիտասարդությունը հանուն հակակոռուպցիայի» ծրագրիրը իրականացվում է Իրավաբանների հայկական ասոցիացիայի կողմից՝ Շվեդիայի կառավարության աջակցությամբ և Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի գործընկերությամբ: Ծրագրի ընդհանուր/հիմնական նպատակն է խթանել երիտասարդության մասնակցությունն ու դերը կոռուպցիայի դեմ պայքարում:

Ծրագրի առանձնահատուկ նպատակներն են.

1. Հակակոռուպցիոն ոլորտում ուսանողների գիտելիքների և կարողությունների ամրապնդում *Երիտասարդ առաջնորդների հակակոռուպցիոն դպրոցի* միջոցով (հակակոռուպցիոն ուսուցման առցանց հարթակի ստեղծում և 100 երիտասարդների ուսուցանում, ինչպես նաև 20 մրցունակ երիտասարդ առաջնորդների պատրաստում, Կառավարության կողմից իրականացվող հակակոռուպցիոն 5 քաղաքականությունների մոնիթորինգի և դրանց կատարելագործման ոլորտում նրանց ազդեցության բարձրացում արտագնա խորացված ուսուցումների, կրթաթոշակների տրամադրման և ուսուցանողների ուսուցումների միջոցով):
2. Հակակոռուպցիոն ակումբների միջոցով հակակոռուպցիոն ոլորտում աշակերտների գիտելիքների և կարողությունների ամրապնդում (Գյումրիի, Վանաձորի, Կապանի նորաստեղծ 3 հակակոռուպցիոն ակումբներում ավագ դպրոցների 45 աշակերտների հակակոռուպցիոն գիտելիքների և կարողությունների զարգացում, *Հակակոռուպցիոն շարադրությունների մրցույթի կազմակերպում*),
3. Երիտասարդության հակակոռուպցիոն ընկալման և գիտակցության մակարդակի բարձրացում *Կոռուպցիայի դեմ պայքարի միջազգային օրը* նշելու միջոցով: